

Տնտեսություն և պարենային անվտանգություն. հետպատերազմյան Արցախում կյանքի վերակազմակերպման առաջնահերթությունները

Համառոտագիր



Մարդկային
գարգացման
միջազգային
կենտրոն

Տնտեսության ավերակներ

Արցախի տնտեսության գրեթե բոլոր ճյուղերն այսօր վտանգված են:

Նշանակալի կորուստներ կան հանքարդյունաբերության ոլորտում: Խոշորագույն Կաշենի հանքն այլևս ունի ջրի խնդիր. Հանքը սնող ջրի աղբյուրն անցել է Ադրբեջանի տիրապետության տակ: Ոսկու հանք կար Կոլսականում, որը կրկին անցել է Ադրբեջանի վերահսկողության տակ:

Արցախի տնտեսության երկրորդ մեծ ճյուղը Էլեկտրաէներգիայի և գազի մատակարարման ոլորտն է: Քաշաթաղի և Շահումյանի շրջանի գրեթե բոլոր փոքր ՀԷԿ-երն անցել են Ադրբեջանի վերահսկողության տակ. Արցախի տարածքում մնացել են չնչին հզորություններ:

Մյուս տուժած ոլորտը գյուղատնտեսությունն է. շուրջ 140 հազար հեկտար վարելահողերից մնացել է 35 հազարը: Նախկին ԼՂԻՄ շրջանի ամենաբերքատու հողերը Մարտունու Ամարասի հովտում և Գեորգավանում են: Գեորգավանն ամբողջությամբ մեր վերահսկողությունից դուրս է, իսկ Ամարասի հովտում մի փոքր մասն է մնացել Արցախի վերահսկողության տակ: Այսինքն, 35 հազար հեկտար ասելով պետք է նկատի ունենալ, որ դրանք հարուստ և բերրի հողերը չեն. արտահանվող հացահատիկն արտադրվում էր հիմնականում Ադրբեջանի վերահսկողության տակ անցած տարածքներում: Կորցրել ենք բազմամյա տնկիներով այգիներ, որոնք մեծածավալ բերք էին տալիս: Չգալի ներդրումներ էին արվել ոչ միայն այգիների ստեղծման, այլև ոռոգման համակարգերի կառուցման վրա: Ունենք վերամշակող ձեռնարկությունների զգալի կորուստ, իսկ մնացածները հումքի խնդիր ունեն: Վտանգված է մեղվաբուծության ճյուղը, որի համար կարևոր նշանակություն ունեն Զարվաճառի շրջանն իր ընձեռած բնական հնարավորություններով:

Տնտեսության միակ ճյուղը, որտեղ որոշակի աշխուժություն է նկատվում, շինարարությունն է: Դա, թերևս, ժամանակավոր բնույթ ունի, քանի որ ներկա աշխուժացման պատճառը պայմանավորված է մարդկանց վերադարձով, ոմբահարված և վնասված կացարանները վերանորոգելով:

Առևտրի վրա պատերազմի ազդեցությունը մեծ է և երկարաժամկետ բնույթ է կրելու. հետպատերազմական իրավիճակում մարդիկ գնումներն անում են խիստ խնայողաբար՝ գնելով միայն առաջին անհրաժեշտության ապրանքներ ու սնունդ:

Հյուրանոցային և ռեստորանային բիզնեսն էլ լուրջ խնդիրների առջև է կանգնել. դրանց մեծ մասը զբոսաշրջության վրա էին հիմնվում: Կա մտավախություն, որ զբոսաշրջությունը մոտակա տարիներին Էական խնդիրներ է ունենալու՝ նախ, մշակութային հուշարձանների՝ Ադրբեջանի տիրապետության տակ անցնելու, այնուհետև հետպատերազմյան իրավիճակի անորոշություններով պայմանավորված:

Ֆինանսական շուկայում խնդիրները ևս մեծ են. առկա են ներդրումները վերադարձնելու լուրջ խնդիրներ՝ կապված հանձնված տարածքներում մնացած բիզնեսների, արդյունաբերական ձեռնարկությունների և ՀԷԿ-երի հետ: Առևտրային բանկերի վարկային պորտֆելների կորստի խնդիրներն էլ փոքր չեն. առանձին դեպքերում թե՛ վարկավորված բիզնեսը, թե՛ գրավի առարկան անցել են Ադրբեջանի տիրապետության տակ:

Եվ ամենահիմնականը. հետպատերազմյան Արցախում կարգավիճակի ու անվտանգության հետ կապված անորոշությունները մնում են շատ բարձր, չափազանց անհանգստացնող բոլորի համար, ինչը լրջորեն խաթարում է ողջ տնտեսական դաշտը, ներդրումային միջավայրն ու բիզնես նպատակադրումների ցանկությունները:



Երևան 0001
Սայաթ Նուվա 19
Հեռ.՝ +374 10 582638
Ֆաքս՝ +374 10 527082

mail@ichd.org
www.ichd.org

Նորից տնտեսություն կառուցելու իրականությունը

Նոր իրավիճակում տնտեսական քաղաքականությունն ուրվագծելու համար Արցախն այսօր առաջին հերթին համատարած «բիզնես-գույքագրման» կարիք ունի: Դեռևս հստակեցված չեն բոլոր «կտրված» բիզնես շղթաները, վերջնականորեն որոշված չեն կորուստների չափերը և, որ ավելի կարևոր է, դեռևս դժվար է պատկերացում կազմել, թե «մնացյալ տնտեսություն» ասածն իրենից ինչ է ներկայացնում և ինչ կարելի է կերտել դրանից:

Պարզ է, որ Արցախի տնտեսությունը այլևս երբեք նախկինը լինել չի կարող հատկապես կառուցվածքային առումով: Պարզ է, որ, օրինակ, ցորեն արտահանող Արցախը հիմա ինքն է ունենալու հացահատիկի կարիք, որ փոխվելու է պարենային ապահովության մոդելը, որ փոխվելու է շատ բան: Կառաջանան սեփականության իրավունքի պաշտպանության, գործազրկության, հողատարածքների անբավարարության, իրացման շղթաների հետ կապված բազում նոր հարցեր: Եվ այդ ամենի մասին պետք է սկսել մտածել օր առաջ:

Հիմա շատ կարևոր է ձևավորել ընկալում, որ մենք ոչ թե վերականգնում ենք Արցախի՝ մեզ ծանոթ տնտեսությունը, այլ մնացած հնարավորությունների վրա կառուցում ենք նոր տնտեսություն: Մա ոչ միայն հնարավորություն կտա խուսափել ամեն քայլում սպասվող հուսահատությունից, այլև թույլ կտա ավելի անկաշկանդ ու լայն մտածել և փորձել օգտվել հնարավոր նոր հեռանկարներից, որոնք կարող են բացվել՝ աշխարհաքաղաքական ներկայության փոփոխված իրականությամբ և խաղաղապահների առկայությամբ պայմանավորված: Միևնույն ժամանակ, ստեղծված պայմաններում տնտեսության վերականգնմանը միտված անհրաժեշտ միջավայր ձևավորելու համար կարիք կլինի աշխատել Արցախում համապատասխան բարոյահոգեբանական մթնոլորտի ձևավորման վրա, հանրային ընկճախտի դրսևորումների դեմ քայլեր ձեռնարկելու, հստակ և մարդկանց հետ հաղորդակցված տեսլականի, նպատակների, դրանց հասնելու ճանապարհային քարտեզի մշակման ուղղությամբ: Հետևաբար, հասարակական-քաղաքական տրանսֆորմացիան պետք է քայլ առաջ լինի կամ առնվազն ներդաշնակ ընթանա տնտեսության, ենթակառուցվածքների և սոցիալական խնդիրների լուծման համալիր ծրագրերի ու գործողությունների հետ:

Համառոտագիրը մշակվել է 2020թ. դեկտեմբերի 14-ին կայացած՝ «Հետպատերազմյան իրականություն. տնտեսություն և պարենային անվտանգություն» խորագրով առանց հղումների իրավունքի առցանց քննարկման մասնակիցների կողմից արտահայտված կարծիքների հիման վրա: Կրոր սեղանին մասնակցում էին անկախ վերլուծաբաններ, քաղաքացիական հասարակության և միջազգային կառույցների ներկայացուցիչներ:

